# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՏԵՄԲԵՐԻ 26-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

2024 թվականի սեպտեմբերի 26-ին ժամը $15^{30}$–ին ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքում, Անիի համայնքապետարանի վարչական շենքի ավագանու նիստերի դահլիճում /հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Մադաթյան փողոց թիվ 1/ տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու հերթական նիստը:

Համայնքի ավագանու նիստը վարում էր Անի համայնքի ղեկավար, ավագանու անդամ՝ Արման Սարիբեկյանը:

Նիստն արձանագրում էր՝ Անիի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար Հարություն Համբարյանը:

Զեկուցողը նշեց, որ <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի համաձայն, Ավագանու երկրորդ հերթական նստաշրջանները գումարվում է սեպտեմբերի երկրորդ երեքշաբթի օրվանից մինչև դեկտեմբերի վերջին չորեքշաբթին:

Համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 18-ի N 7-Ա որոշման և ավագանու կանոնակարգի համաձայն, Անի համայնքի ավագանու նստաշրջանների գումարման համայնքի ավագանու հերթական նիստերի անցկացման օր է սահմանված յուրաքանչյուր ամսի վերջին հինգշաբթին, այսինքն այսօր:

<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի համաձայն, ավագանու հերթական նիստից մեկ շաբաթ առաջ հրապարակվել է ավագանու այսօրվա նիստի օրակարգը և ավագանու որոշումների նախագծերը, նշվել են նիստի անցկացման վայրը և ժամանակը: Այդ տեղեկությունները փակցվել են համայնքի ղեկավարի և ավագանու նստավայրում, տարածվել են զանգվածային լրատվության միջոցներով, տեղադրվել են մարզպետարանի, համայնքապետարանի պաշտոնական համացանցային կայքերում և հրապարակային ծանուցումների www.Azdarar.am կայքում:

Անի համայնքի ավագանու 21 անդամներից, համայնքի ավագանու հերթական նիստին մասնակցում են <<Քաղաքացիական պայմանագիր>> կուսակցության ավագանու 10 անդամները:

<<ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ավագանու անդամ՝ Մուրադ Ասլանյանը,

<<Քաղաքացիական պայմանագիր>> կուսակցության ավագանու անդամ Գագիկ

Թադևոսյանը ավագանու նիստից բացակայում էր հարգելի պատճառով /հիվանդություն/:

Համայնքի ավագանու նիստին ներկա էին համայնքի ղեկավարի տեղակալները, համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ, համայնքի բնակավայրերի վարչական ղեկավարներ, համայնքային ենթակայության կազմակերպությունների տնօրեններ, համայնքի ներկայացուցիչներ:

Անհարգելի կարգով բացակայում էին՝

**<<ԱԶԳ-ՀԱՄԱՅՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ ավագանու 7 անդամները.**

**<<ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ավագանու 1 անդամը,**

**<<ԻՄ ՀԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ավագանու 1 անդամը:**

Դրանով հանդերձ, ավագանու նիստի քվորումը ապահովված է, համայնքի ավագանու հերթական նիստը հայտարարվեց բացված:

Համայնքի ավագանուն տեղեկացվեց, որ թիվ 33 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը հիմք ընդունելով Անի համայնքի ավագանու 2024 թվականի օգոստոսի 30-ի <<<<**ԱԶԳ-ՀԱՄԱՅՆՔ**>> **ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ** ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹՎՈՎ 6 /ՎԵՑ/, <<**ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔ**>> **ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ** ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹՎՈՎ 2 /ԵՐԿՈՒ/ ԵՎ <<**ԻՄ ՀԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ**>> **ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ** ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 1 /ՄԵԿ/ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 96-Ա որոշումը, իր 2024 թվականի սեպտեմբերի 12-ի N N 23, 24 և 25 արձանագրություններով Անի համայնքի ավագանու <<**ԱԶԳ-ՀԱՄԱՅՆՔ**>> **ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ** ընտրական ցուցակից հանված և լիազորությունները վաղաժամկետ դադարեցված ավագանու անդամներ՝ ԳԵՎՈՐԳ ՂԶՐՈՅԱՆԻ, ՍՈՍ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ, ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ, ԱՐՍԵՆ ՎԱՐՈՍՅԱՆԻ, ԼՈՒԻԶԱ ՎԱՐԺԱՊԵՏՅԱՆԻ, ԱՐՄԵՆ ՆԻԿՈՅԱՆԻ մանդատները տրվել են՝ <<**ԱԶԳ-ՀԱՄԱՅՆՔ**>> **ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ** ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածուներ՝ ՄԱՌԼԵՆ ՍՈՒՐԵՆԻ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ, ՆԱԻՐԻ ՍԵՐՅՈԺԱՅԻ ԱԼԱՎԵՐԴՅԱՆԻՆ, ՄԻՍԱԿ ԿԱՐԱՊԵՏԻ ԱՂԱՔԱՆՅԱՆԻՆ, ՍԱՄՎԵԼ ԳՐԻԳՈՐԻ ՈՒՌՈՒՏՅԱՆԻՆ, ԹԱԹՈՒԼ ՄՀԵՐԻ ԲՈՒԼՈՅԱՆԻՆ և ՖԱՅԱ ՄԱԿԱՐԻ ԳԻՆՈՍՅԱՆԻՆ:

Անի համայնքի ավագանու <<**ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔ**>> **կուսակցության** ընտրական ցուցակից հանված և լիազորությունները վաղաժամկետ դադարեցված ավագանու անդամներ՝ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ և ԱՆԱՀԻՏ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ մաանդատները տրվել են

**<<ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔ>> կուսակցության** ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածուներ՝ ՄՈՒՐՍԴ ՄՀԵՐԻ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ և ՆԱՐԻՆԵ ՄԻՇԱՅԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ:

Անի համայնքի ավագանու **<<Իմ հզոր համայնք>> կուսակցության** ընտրական ցուցակից հանված և լիազորությունները վաղաժամկետ դադարեցված ավագանու անդամ՝ ԱՐՄԵՆԱԿ ՄԵԼՈՅԱՆԻ մանդատը տրվել է **<<Իմ հզոր համայնք>> կուսակցության** ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածու՝ ՄԱՐԳԱՐԻՏ ՍԻՄՈՆԻ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ:

Արման Սարիբեկյանը շնորհավորեց ավագանու անդամի մանդատներ ստացած գործընկերներին, ցանկացավ նրանց արդյունավետ և կառուցողական աշխատանք՝ Անի համայնքի տնտեսական և սոցիալական զարգացման, համայնքի բնակչության բարեկեցության ապահովման կարևորագույն գործում:

Համոզմունք հայտնվեց, որ ավագանու համալրված կազմը ակտիվորեն կներգրավվի <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ավագանու անդամի լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացմանը:

Համայնքի ղեկավարի կողմից հրապարակվեց <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենք 70-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, **<<ԱԶԳ-ՀԱՄԱՅՆՔ>> կուսակցությունների դաշինքից** ավագանու անդամի մանդատ ստացած **ՆԱԻՐԻ ՍԵՐՅՈԺԱՅԻ ԱԼԱՎԵՐԴՅԱՆԻ** 2024 թվականի սեպտեմբերի 17-ի դիմումը՝ ավագանու անդամի իր լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասի: Անհրաժեշտ է այս հրապարակումը արձանագրել և ներկայացնել թիվ 33 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին՝ ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու համար:

Համայնքի ավագանու նիստի քննարկմանը ներկայացվեց օրակարգի 17 հարցեր:

**<u>ՕՐԱԿԱՐԳ</u>**

1) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

2) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 109-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

3) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔԱՎՈՐ

ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

4) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի N 77-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

5) «ՄԱՐԱԼԻԿԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

6) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 113-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/Զեկուցող՝ Անիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Հ. Սիմոնյան/

7) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի N 62-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

8) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ԵՎ ՁՈՐԱԿԱՊ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԱԲԱՐ 08-003-0020-0200 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,04 ՀԵԿՏԱՐ ԵՎ 08-073-0010-0043 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.13665 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

9) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԻՊԵՄԶԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀՈՂԵՐ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-013-0101-0004 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.976224 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի N 63-Ա ՈՐՈՇՈՒՄԸ

ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

10) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԻՆԳ ԿՏՈՐ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

11) ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ-ԾՐԱԳԻՐ 3-Ի ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ Մ 1 ԵՐԵՎԱՆ-ԳՅՈՒՄՐԻ-ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԼԱՆՋԻԿ-ԳՅՈՒՄՐԻ ՀԱՏՎԱԾԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳԵՐԱԿԱ ՇԱՀԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

12) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-003-0126-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԿԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏ ՀՈՂԱՏԵՍՔԻ 0.62898 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹՈՎ, ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՄՐՑՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

13) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-003-0126-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԿԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏ ՀՈՂԱՏԵՍՔԻ 0.29973 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

14) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ Հ. ՇԻՐԱԶԻ ՓՈՂՈՑ 28 ՇԵՆՔ, ԹԻՎ 5 ԲՆԱԿԱՐԱՆԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՎՅԱԼ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲՆԱԿԻՉ ՌՈՒԶԱՆՆԱ ՎՈԼՈԴՅԱՅԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԵՐԿՈՒ ԱՆՁԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

15) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 08-003-0026- ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ

ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԿԱ 0.06330 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

16) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-003-0050-0031 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,0187 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ՄԱՆՎԵԼ ԶԱՎԵՆԻ ԱՎԴԱԼՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

18) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ Մ. ՄԱԴԱԹՅԱՆ ՓՈՂՈՑ, 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ 5-ՐԴ ՇԵՆՔ, ԹԻՎ 3 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՔԱՂԱՔԱՑԻ ԳԵՎՈՐԳ ԳԵՂԱՄԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

Հայտարարվեց, որ ավագանու օրակարգի նախագիծը հրապարակված է, առաջարկվեց՝ եթե օրակարգի նախագծի վերաբերյալ կան առաջարկություններ և դիտողություններ խնդրեց ներկայացնել:

Օրակարգի նախագծի վերաբերյալ առաջարկություն ներկայացրեց ավագանու անդամ Էդիկ Ոհռուտյանը:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի հունիսի 28-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Հ. Շահինյան փողոց 4-րդ նրբանցք թիվ 15/1 հասցեում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 08-003-0029-0108 կադաստրային ծածկագրով 0,00886 հեկտար մակերեսով հողամասը բաց մրցույթով, հրապարակային սակարկությունների միջոցով, կառուցապատման իրավունքով տրամադրելու համար համաձայնություն տալու, մրցույթի պայմաններն ու վճարի մեկնարկային չափը հաստատելու մասին>> N 47-Ա որոշմամբ համայնքի ավագանին համաձայնություն է տվել համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 08-003-0029-0108 կադաստրային ծածկագրով 0,00886 հեկտար մակերեսով հողամասը բաց մրցույթով, հրապարակային սակարկությունների միջոցով, կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու համար:

Անի համայնքի ղեկավարի 2023 թվականի սեպտեմբերի 12-ի N 331-Ա որոշմամբ հիմք ընդունելով Անի համայնքի մրցութային հանձնաժողովի կողմից 2023 թվականի սեպտեմբերի 11-ի անցկացված մրցույթի արդյունքները նշված հողամասը կառուցապատման իրավունքով 10

/տաս/ տարի ժամկետով, 84000 (ութսունչորս հազար) դրամ տարեկան վճարով օգտագործման է տրամադրվել մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակից, քաղաքացի՝ Գեյիմ Ֆելիքսի Առուշանյանին, որի նկատմամբ իրավունքները ենթարկվել են պետական գրանցման:

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի գեոդեզիայի և հողօգտագործման վերահսկողության վարչության մասնագետների կողմից Անիի համայնքապետարանում իրականացված ստուգումների վերաբերյալ կազմված 2023 թվականի նոյեմբերի 6-ի N ՏԾ/ԳՀ/13-18 ակտում արձանագրվել է հողի օգտագործման տրամադրման կարգի խախտում, քանի որ կառուցապատման իրավունքով տրամադրված հողամասը չի հանդիսանում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հող: Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի 2023 թվականի նոյեմբերի 14-ի N ՏԾ/ԳՀ/13-18 որոշումամբ տրվել է պատադիր կատարման ցուցում՝ թույլ տրված խախտումը վերացնելու վերաբերյալ:

Հարցը ներկայացվել է համայնքի ավագանու 2024 թվականի հունիսի 26-ի նիստում, սակայն ավագանու որոշմամբ հարցը հանվել է քննարկումից:

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի 2023 թվականի նոյեմբերի 14-ի N ՏԾ/ԳՀ/13-18 որոշումամբ տրված պարտադիր կատարման ենթակա ցուցումը, հրատապության անհրաժեշտությամբ առաջարկում եմ օրակարգի նախագծում ընդրկել հետևյալ հարցը՝

ՔԱՂԱՔԱՑԻ ԳԵՅԻՄ ՖԵԼԻՔՍԻ ԱՌՈՒՇԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-003-0029-0108 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,00886 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԳԵՅԻՄ ՖԵԼԻՔՍԻ ԱՌՈՒՇԱՆՅԱՆԻ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ներկայացված առաջարկությունը, քվեարկության Կողմ 11, դեմ 0, ձեռնպահ 0 արդյունքներով համայնքի ավագանու կողմից ընդունվեց:

Օրակարգի նախագծի վերաբերյալ առաջարկություն ներկայացրեց ավագանու անդամ Հասմիկ Ջատիկյանը:

Առաջարկվեց օրակարգի 5-րդ հարցի՝ «ՄԱՐԱԼԻԿԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ, քննարկումը հանել օրակարգից, հաշվի առնելով հիմնարկի տարեվերջյան ֆինանսական խնդիրների կարգավորման և ուսումնական տարին ավարտելու հետ կապված բարդություններ չառաջացնելու անհրաժեշտությունը:

Ներկայացված առաջարկությունը, քվեարկության Կողմ 11, դեմ 0, ձեռնպահ 0 արդյունքներով համայնքի ավագանու կողմից ընդունվեց:

Ներկայացված առաջարկություններով հանդերձ, քվեարկության Կողմ 11, դեմ 0, ձեռնպահ 0 արդյունքներով, համայնքի ավագանու հերթական նիստի օրակարգն ընդունվեց:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի, 62-րդ հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 28-ի N 7-Ա որոշումը

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու հերթական երկրորդ նստաշրջանի 2024 թվականի սեպտեմբերի 26-ին ժամը 15³⁰-ին Անիի համայնքապետարանի վարչական շենքի նիստերի դահլիճում կայանալիք համայնքի ավագանու հերթական նիստի հետևյալ օրակարգը՝

1) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

2) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 109-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

3) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔԱՎՈՐ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

4) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի N 77-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

5) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 113-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

Հ․ Սիմոնյան/

6) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի N 62-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

7) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ԵՎ ՁՈՐԱԿԱՊ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԱԲԱՐ 08-003-0020-0200 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,04 ՀԵԿՏԱՐ ԵՎ 08-073-0010-0043 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0․13665 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

8) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԻՊԵՄԶԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀՈՂԵՐ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-013-0101-0004 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.976224 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի N 63-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

9) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԻՆԳ ԿՏՈՐ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

10) ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ-ԾՐԱԳԻՐ 3-Ի ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ Մ 1 ԵՐԵՎԱՆ-ԳՅՈՒՄՐԻ-ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԼԱՆՋԻԿ-ԳՅՈՒՄՐԻ ՀԱՏՎԱԾԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳԵՐԱԿԱ ՇԱՀԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

11) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-003-0126-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԿԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏ ՀՈՂԱՏԵՍՔԻ 0.62898 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹՈՎ, ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՄՐՑՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

12) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-003-0126-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԿԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏ ՀՈՂԱՏԵՍՔԻ 0.29973 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

13) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ Հ□ ՇԻՐԱԶԻ ՓՈՂՈՑ 28 ՇԵՆՔ, ԹԻՎ 5 ԲՆԱԿԱՐԱՆԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՎՅԱԼ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲՆԱԿԻՉ ՌՈՒԶԱՆՆԱ ՎՈԼՈԴՅԱՅԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԵՐԿՈՒ ԱՆՁԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

14) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 08-003-0026- ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԿԱ 0□06330 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

15) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-003-0050-0031 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,0187 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ՄԱՆՎԵԼ ԶԱՎԵՆԻ ԱՎԴԱԼՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

16) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ Մ. ՄԱԴԱԹՅԱՆ ՓՈՂՈՑ, 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ 5-ՐԴ ՇԵՆՔ, ԹԻՎ 3 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՔԱՂԱՔԱՑԻ ԳԵՎՈՐԳ ԳԵՂԱՄԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

17) ՔԱՂԱՔԱՑԻ ԳԵՅԻՄ ՖԵԼԻՔՍԻ ԱՌՈՒՇԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-003-0029-0108 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,00886 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԳԵՅԻՄ ՖԵԼԻՔՍԻ ԱՌՈՒՇԱՆՅԱՆԻ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**Օրակարգ-2**

**2) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 109-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

Հարգելի գործընկերներ.

Զեկուցողը նշեց, որ նախագիծը համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացվում հաշվի առնելով <<Մարալիկի երաժշտական դպրոց>> բյուջետային հիմնարկի, <<Ռոմի Բարոնյանի անվան մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության և <<Անիի կոմունալ տնտեսություն>> համայնաքային բյուջետային հիմնարկի առաջարկությունները՝ համապատասխան կազմակերպությունների հաստիքացուցակներեւմ փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության վերաբերյալ:

Որոշման նախագծի 1-ին կետով նախատեսվում է

<<Մարալիկի երաժշտական դպրոց>> բյուջետային հիմնարկի 15-րդ կետում նշված Սոլֆեջոյի և դաշնամուրի դասատուի <<1>> միավոր դրույքաչափը փոխարինել <<1,5>> դրույքաչափով՝ հաշվի առնելով սաների թվի ավելացմամբ դասատուի աշխատանքների ծանրաբեռնվածությունը:

Որոշման հավելվածի 22-րդ տողից հետո ավելացնել նոր՝ 23-րդ կետ, հետևյալ բովանդակությամբ՝

| Հ/հ | Հաստիքի անվանումը | Հաստիքի քանակը | Պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամ/ | Սահմանված դրույքը | Սահմանված դրույքաչափը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 23 | Կիթառի դասատու | 1 | 104 000 | 1 | 104 000 |

Որոշման նախագծի 2-րդ կետով նախատեսվում է

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների կառուցվածքը, աշխատողների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 109-Ա որոշման N 6 հավելվածում <<Ռոմի Բարոնյանի անվան մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակում նախատեսվում է կատարել հետևյալ փոփոխությունները՝

Որոշման հավելվածի 17-րդ տողում նշված Ֆիզկուլտ հրահանգչի «0.75» թիվը փոխարինել «1» թվով, հաշվի առնելով աշխատանքների ծանրաբեռնվածությունը:

Իսկ նախագծի 3-րդ կետով նախատեսվում է <<Անիի կոմունալ տնտեսություն>> համայնաքային բյուջետային հիմնարկի հաստիքացուցակում ավելացնել <<Համայնքային ենթակայության կազմակերպությունների տեխնիկական միջոցների սպասարկման մասնագետի>> 1 միավոր հաստիք՝ 190 000 ՀՀ դրամ դրույքաչափով, որն զբաղվելու է համայնքային ենթակայության կազմակերպությունների տեխնիկական միջոցների սպասարկմամբ /ջեռուցման համակարգեր, օդափոխիչ հարմարանքներ, համակարգչային տեխնիկա, լուսավորության համակարգեր, ինտերնետային կապ և տեխնիմաման այլ միջոցներ/:

Որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի դրույթներով.

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու որոշումը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 109-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի դրույթներով.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի առաջարկությամբ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 21-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների կառուցվածքը, աշխատողների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 109-Ա որոշման N 4 հավելվածում /<<Մարալիկի երաժշտական դպրոց>> բյուջետային հիմնարկ/ կատարել հետևյալ փոփոխությունները.

ա) Որոշման հավելվածի 15-րդ տողի /սոլֆեջոյի դասատու/ 5-րդ սյունակի «1» թիվը փոխարինել «1.5» թվով:

բ) Նույն տողի 6-րդ սյունակի «104 000» թիվը փոխարինել «156000» թվով

գ) որոշման հավելվածի 22-րդ տողից հետո ավելացնել նոր՝ 23-րդ կետ, հետևյալ բովանդակությամբ՝

| Հ/հ | Հաստիքի անվանումը | Հաստիքի քանակը | Պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամ/ | Սահմանված դրույքը | Սահմանված դրույքաչափը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 23 | Կիթառի դասատու | 1 | 104 000 | 1 | 104 000 |

դ) Վերջին՝ «Ընդամենը» տողի 5-րդ սյունակում նշված «25.5» թիվը փոխարինել «27» թվով, իսկ 6-րդ սյունակում նշված «2 797 000» թիվը փոխարինել «2 953 000» թվով:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների կառուցվածքը, աշխատողների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 109-Ա որոշման N 6 հավելվածում <<Ռոմի Բարոնյանի անվան մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն/ կատարել հետևյալ փոփոխությունները.

ա) Որոշման հավելվածի 17-րդ տողի /Ֆիզկուլտ հրահանգիչ/ 5-րդ սյունակի «0.75» թիվը փոխարինել «1» թվով:

բ) նույն տողի 6-րդ սյունակի «78 000» թիվը փոխարինել «104 000» թվով:

գ) Վերջին՝ «Ընդամենը» տողի 5-րդ սյունակում նշված «25.85» թիվը փոխարինել «26.1» թվով, իսկ 6-րդ սյունակում նշված «3 049 000» թիվը փոխարինել «3 075 000» թվով:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 21-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների կառուցվածքը, աշխատողների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 109-Ա որոշման N 9 հավելվածում /<<Անիի կոմունալ տնտեսություն>> համայնաքային բյուջետային հիմնարկ>>/ կատարել հետևյալ փոփոխությունները.

գ) որոշման հավելվածի 49-րդ տողից հետո ավելացնել նոր՝ 50-րդ կետ, հետևյալ

բովանդակությամբ՝

| Հ/հ | Հաստիքի անվանումը | Հաստիքի քանակը | Պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամ/ | Սահմանված դրույքը | Սահմանված դրույքաչափը /ՀՀ դրամ/ | |
|---|---|---|---|---|---|---|
| 50 | Համայնքային ենթակայության կազմակերպությունների տեխնիկական միջոցների սպասարկման մասնագետ | 1 | 190 000 | 1 | 190 000 | |

դ) Վերջին՝ «Ընդամենը» տողի 2-րդ սյունակում նշված «114» թիվը փոխարինել «115» թվով, իսկ 6-րդ սյունակում նշված «17 018 000» թիվը փոխարինել «17 208 000» թվով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Օրակարգ-3

3) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔԱՎՈՐ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

Զեկուցողը նշեց, որ որոշման նախագծով նախատեսվում է Անի համայնքի 2024 թվականի բյուջեի գործառական դասակարգման բաժին 10, խումբ 07, դաս 01 (սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) և տնտեսագիտական դասակարգման 4729 (այլ նպաստներ բյուջեից) հոդվածից, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի կարիքավոր ընտանիքներին **տրամադրել 2 635 000 /երկու միլիոն վեց հարյուր երեսունհինգ/** Հայաստանի Հանրապետության դրամ դրամական օգնություն՝ թվով 67 կարիքավոր ընտանիքների:

Որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, 10-րդ հոդվածի 11-րդ մասի դրույթներով, հիմք է ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 15-ի N 7-Ա որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքում սոցիալական աջակցության ծառայությունների տրամադրման չափորոշիչները>> և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2024 թվականի հունիսի 30-ի N 581-Ա որոշմամբ ստեղծված սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի 2024 թվականի սեպտեմբերի 18-ի արձանագրությունը:

Համայնքի ղեկավար Արման Սարիբեկյանի կողմից առաջարկություն ներկայացվեց 150000 /մեկ հարյուր հիսուն հազար դրամական օգնություն տրամադրել զոհված զինծառայողի մոր՝ Թեհմինե Սաղաթելյանի մահվան կապակցությամբ: Ներկայացվեց, որ ընտանիքը գտնվում է սոցիալապես խիստ անապահով վիճակում:

Որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություն ներկայացվեց Անիի համայնքապետարանի աշխատակազմի Կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Գոհար Ծերունյանի կողմից: Ներկայացվեց, որ Անիի համայնքապետարան դիմումներ են ստասվել 2024 թվականի հոկտեմբերի 10-ից 14-ը Կիպրոսի Լառնակա քաղաքում անցկացվելիք դեռահասների, պատանիների և երիտասարդների սամբոյի աշխարհի առաջնությունը Սյուզաննա Մանուկյանի և Արմեն Սաֆարյան մասնակցելու համար դրամական աջակցություն տրամադրելու խնդրանքով, իսկ քաղաքացի Հասմիկ Սիմոնյանից դիմում է ստացվել դրամական աջակցություն տրամադրել 2024 թվականի դեկտեմբերի 13-16-ը Իտալիայի Սիցիլիա քաղաքում կայանալիք երգի մրցույթին աղջկա՝ Նարե Հայկարամի Պետրոսյանի մասնակցելու համար:

Առաջարկուն ներկայացվեց որոշման հավելվածում ավելացնել հետևյալ ցուցակը:

**ՑՈՒՑԱԿ**
**ՍԱՄԲՈՅԻ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐԳԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՓՈՒԼԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ**

| Հ/Հ | ԴԻՄՈՂԻ ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ, ՀԱՅՐԱՆՈՒՆ | ԲՆԱԿԱՎԱՅՐԸ | ԿԱՐԳԱՎԻՃԱԿ | ՓՈԽՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓԸ /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|
| 1 | Հասմիկ Սիմոնյան | Սառնաղբյուր | 2024 թվականի դեկտեմբերի 13-16-ը Իտալիայի Սիցիլիա քաղաքում կայանալիք երգի մրցույթին Նարե Հայկարամի Պետրոսյանի մասնակցելու համար | 100 000 |
| 2 | Կարեն Մանուկյան | Մարալիկ | 2024 թվականի հոկտեմբերի 10-ից 14-ը Կիպրոսի Լառնակա քաղաքում անցկացվելիք դեռահասների, պատանիների և երիտասարդների սամբոյի աշխարհի առաջնությունը Սյուզաննա Մանուկյանի մասնակցելու համար | 150 000 |
| 3 | Արմեն Սաֆարյան | Մարալիկ | 2024 թվականի հոկտեմբերի 10-ից 14-ը Կիպրոսի Լառնակա քաղաքում անսկացվելիք դեռահասների, պատանիների և երիտասարդների սամբոյի աշխարհի առաջնությունը մասնակցելու համար | 150 000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | | 400 000 |

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց ներկայացված առաջարկությունները:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու որոշումը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔԱՎՈՐ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-ԻՑ 14-Ը ԿԻՊՐՈՍԻ ԼԱՌՆԱԿԱ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ, ՊԱՏԱՆԻՆԵՐԻ և ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՍԱՄԲՈՅԻ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՅՈՒԶԱՆՆԱ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԵՎ ԱՐՄԵՆ ՍԱՖԱՐՅԱՆԻ**

**ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ, ԻՍԿ  2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-16-Ը ԻՏԱԼԻԱՅԻ ՍԻՑԻԼԻԱ ՔԱՂԱՔՈՒՄ ԿԱՅԱՆԱԼԻՔ ԵՐԳԻ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՆԱՐԻՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, 10-րդ հոդվածի 11-րդ մասի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 15-ի N 7-Ա որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքում սոցիալական աջակցության ծառայությունների տրամադրման չափորոշիչները>> և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2024 թվականի հունիսի 30-ի N 581-Ա որոշմամբ ստեղծված սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի 2024 թվականի սեպտեմբերի 18-ի արձանագրությունը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2024 թվականի բյուջեի գործառական դասակարգման բաժին 10, խումբ 07, դաս 01 (սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) և տնտեսագիտական դասակարգման 4729 (այլ նպաստներ բյուջեից) հոդվածից, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի կարիքավոր ընտանիքներին տրամադրել 2 635 000 /երկու միլիոն վեց հարյուր երեսունհինգ/ Հայաստանի Հանրապետության դրամ դրամական օգնություն՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2024 թվականի բյուջեի գործառական դասակարգման բաժին 10, խումբ 07, դաս 01 (սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) և տնտեսագիտական դասակարգման 4727 (Կրթական, մշակութային և սպորտի նպաստներ բյուջեից) հոդվածից 2024 թվականի հոկտեմբերի 10-ից 14-ը Կիպրոսի Լառնակա քաղաքում անցկացվելիք դեռահասների, պատանիների և երիտասարդների սամբոյի աշխարհի առաջնությունը Սյուզաննա Մանուկյանի և Արմեն Սաֆարյանի մասնակցության, իսկ 2024 թվականի դեկտեմբերի 13-16-ը Իտալիայի Սիցիլիա քաղաքում կայանալիք երգի մրցույթին Նարինե Պետրոսյանի մասնակցության հետ կապված ծախսերը հոգալու համար տրամադրել ընդհանուր գումարով 400 000 /չորս հարյուր հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Որոշման N 1 և N 2 հավելվածները կցվում են արձանագրությանը:

<u>**Օրակարգ-4**</u>

**4) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի N 77-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

Զեկուցողը նշեց, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի մայիսի 30-ի «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից անի համայնքի լանջիկ բնակավայրի համայնքային կենտրոնի եվ սառնաղբյուրի մանկապարտեզի շենքի տանիքներին <<վերականգնվող էներգիայի եվ էներգոարդյունավետության խթանում շիրակի մարզի համայնքներում» միջոցառման շրջանակում էներգոարդյունավետության եվ վերականգնող էներգիայի փոքրածավալ միջոցառումների շրջանակներեում արեվային ֆոտովոլտային կայանների տեղադրման ծրագրի իրականացմանը համաձայնություն տալու և համայնքից պահանջվող ներդրումն ապահովելու մասին>> N 77-Ա որոշմամբ նախտեսվել էր Անի համայնքի Լանջիկի բնակավայրի համայնքային կենտրոնի և Սառնաղբյուրի մանկապարտեզի շենքի վրա արևային ֆոտովոլտային կայանների տեղադրելու ծրագիրի համար ապահովել համայնքից պահանջվող ծրագրի արժեքի 20 տոկոսի չափով ներդրում, որը գումարով կազմում էր 1.576.000•/մեկ միլիոն հինգ հարյուր յոթանասունվեց հազար/ ՀՀ դրամ:

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության 2024 թվականի սեպտեմբերի 18-ի AC-337-24 գրությամբ մեզ տեղեկացվել է, որ նշված ծրագրի շրջանակներում Անի համայնքի Լանջիկի բնակավայրի համայնքային կենտրոնի և Սառնաղբյուրի մանկապարտեզի շենքի վրա արևային ֆոտովոլտային կայանների տեղադրման ծրագրից բացի, ծրագրում է ընդրկվել նաև Անի համայնքի Մարալիկ քաղաքի <<Ռոմի Բարոնյանի անվան մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության շենքի վրա 5□5 կՎտ հզորության ֆետովոլտային համակարգի տեղադրումը, որի արդյունքում ծրագրի արժեքը ավելացվել և կազմել 9,365,000 ՀՀ դրամ, որից <<Հայկական Կարիտաս>> բարեսիրական հասարակական կազմակերպության ներդրումը կազմում է 7,492,000 ՀՀ դրամ, իսկ համայնքի ներդրումը՝ 1,873,000 ՀՀ դրամ•

Որոշման նախագծով նախատեսվում է կատարել փոփոխություն և որոշման մեջ նշված <<1,576,000 /մեկ միլիոն հինգ հարյուր յոթանասունվեց հազար/>> թիվն ու բառերը փոխարինել <<1,873, 000 /մեկ միլիոն ութ հարյուր յոթանասուներեք հազար/>> թվով և բառերով, այսինքն ծրագրի արժեքի ավելացմամբ ավելացել է նաև համայնքի ներդրման չափը:

Որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի դրույթով, և հիմք է ընդունվել «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության վերը նշված գրությունը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու որոշումը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի N 77-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի դրույթով, հիմք ընդունելով «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության 2024 թվականի սեպտեմբերի 18-ի AC-337-24 գրությունը, համաձայն որի՝ «Վերականգնող էներգիայի և էներգոադյունավետության խթանում Շիրակի մարզի համայնքներում» միջոցառման շրջանակում էներգաարդյունավետության և վերականգնող էներգիայի փոքրածավալ միջոցառումների շրջանակներում Անի համայնքի Լանջիկի բնակավայրի համայնքային կենտրոնի և Սառնաղբյուրի մանկապարտեզի շենքի վրա արևային ֆոտովոլտային կայանների տեղադրման ծրագրից բացի, ծրագրում է ընդրկվել նաև Անի համայնքի Մարալիկ քաղաքի <<Ռոմի Բարոնյանի անվան մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության շենքի վրա 5.5 կՎտ հզորության ֆետովոլտային համակարգի տեղադրումը, որի արդյունքում ծրագրի արժեքը կազմել 9,365,000 ՀՀ դրամ, որից <<Հայկական Կարիտաս>> բարեսիրական հասարակական կազմակերպության ներդրումը կազմում է 7,492,000 ՀՀ դրամ, իսկ համայնքի ներդրումը՝ 1,873,000 ՀՀ դրամ.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին**
**որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի մայիսի 30-ի «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից անի համայնքի լանջիկ բնակավայրի համայնքային կենտրոնի եվ սառնաղբյուրի մանկապարտեզի շենքի տանիքներին <<Վերականգնվող էներգիայի և էներգոարդյունավետության խթանում Շիրակի մարզի համայնքներում» միջոցառման շրջանակում էներգոարդյունավետության և վերականգնող էներգիայի փոքրածավալ միջոցառումների շրջանակներեում արևային ֆոտովոլտային կայանների տեղադրման ծրագրի իրականացմանը համաձայնություն տալու և համայնքից պահանջվող ներդրումն ապահովելու մասին>> N 77-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) Որոշման 1-ին կետում նշված <<Սառնաղբյուրի մանկապարտեզի շենքի>> բառերից հետո ավելացնել <<Անի համայնքի Մարալիկ քաղաքի <<Ռոմի Բարոնյանի անվան մանկապարտեզի շենքի>> բառերը:

2) Որոշման 2-րդ կետում նշված <<1,576,000 /մեկ միլիոն հինգ հարյուր յոթանասունվեց հազար/>> թիվն ու բառերը փոխարինել <<1,873, 000 /մեկ միլիոն ութ հարյուր յոթանասուներեք հազար/>> թվով և բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

**Օրակարգ-5**

**5) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 113-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկուցող՝ Անիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Հայկ Սիմոնյան

Զեկուցողը ներկայացրեց որոշման նախագիծը և պատասխանեց ավագանու անդամների հարցերին:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու որոշումը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 113-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2024 թվականի բյուջեի հաստատման մասին>> N 113-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Համայնքի բյուջեի եկամտային մասի 7331 (Պետական բյուջեից տրամադրվող այլ ընթացիկ դոտացիաներ) տողի «0» թիվը փոխարինել «95480.8» թվով:

2) Գործառական դասակարգման բաժին 01, խումբ 01, դաս 01 (Ապարատի պահպանման ծախսեր) և տնտեսագիտական դասակարգման 4212 (Էներգետիկ ծառայություններ) հոդվածի «14000.0» թիվը փոխարինել «14800.0» թվով, 4216 (Գույքի և սարքավորումների վարձակալություն) հոդվածի «1000.0» թիվը փոխարինել «0» թվով, 4239 (Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) հոդվածի «4000.0» թիվը փոխարինել «3420.0» թվով, 4251 (Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում) հոդվածի «3552.0» թիվը փոխարինել «552.0» թվով, 4269 (Հատուկ նպատակային նյութեր) հոդվածի «9540.0» թիվը փոխարինել «3440.0» թվով:

3) Գործառական դասակարգման բաժին 06, խումբ 04, դաս 01 (Փողոցների լուսավորում) և տնտեսագիտական դասակարգման 4216 (Գույքի և սարքավորումների վարձակալություն) հոդվածի «1000.0» թիվը փոխարինել «0» թվով, 4251 (Շենքերի և կառույցների ընթացիկ

նորոգում և պահպանում) հոդվածի «3000.0» թիվը փոխարինել «1500.0» թվով, 4269 (Հատուկ նպատակային նյութեր) հոդվածի «6000.0» թիվը փոխարինել «7500.0» թվով:

4) Գործառական դասակարգման բաժին 05, խումբ 03, դաս 01 (Սան. մաքրում) և տնտեսագիտական դասակարգման 4264 (Տրանսպորտային նյութեր) հոդվածի «20000.0» թիվը փոխարինել «29314.6» թվով:

5) Գործառական դասակարգման բաժին 09, խումբ 05, դաս 01 («Անի համալիր մարզադպրոց» ՀՈԱԿ) և տնտեսագիտական դասակարգման 4511 (Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին) հոդվածի «27335.8» թիվը փոխարինել «30435.8» թվով:

6) Գործառական դասակարգման բաժին 05, խումբ 06, դաս 01 (Շրջակա միջավայրի պաշտպանություն) և տնտեսագիտական դասակարգման 4239 (Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) հոդվածի «1500.0» թիվը փոխարինել «0» թվով, 4241 (Մասնագիտական ծառայություններ) հոդվածի «1000.0» թիվը փոխարինել «0» թվով, 4269 (Հատուկ նպատակային նյութեր) հոդվածի «800.0» թիվը փոխարինել «0» թվով:

7) Գործառական դասակարգման բաժին 06, խումբ 03, դաս 01 (Ջրամատակարարում) և տնտեսագիտական դասակարգման 4212 (Էներգետիկ ծառայություններ) հոդվածի «15000.0» թիվը փոխարինել «17565.4» թվով, 5112 (Շենքերի և շինությունների կառուցում) հոդվածի «0» թիվը փոխարինել «21714.3» թվով:

8) Գործառական դասակարգման բաժին 04, խումբ 02, դաս 01 (Գյուղատնտեսություն) և տնտեսագիտական դասակարգման 4111 (Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ) հոդվածի «0» թիվը փոխարինել «2781.0» թվով, 4269 (Հատուկ նպատակային նյութեր) հոդվածի «1500.0» թիվը փոխարինել «700.0» թվով, 4729 (Այլ նպաստներ բյուջեից) հոդվածի «0» թիվը փոխարինել «92699.8» թվով:

9) Գործառական դասակարգման բաժին 04, խումբ 05, դաս 01 (Ճանապարհային տրանսպորտ) և տնտեսագիտական դասակարգման 5112 (Շենքերի և շինությունների կառուցում) հոդվածի «155531.4» թիվը փոխարինել «133817.1» թվով:

10) Գործառական դասակարգման բաժին 06, խումբ 01, դաս 01 (Բնակարանային շինարարություն) և տնտեսագիտական դասակարգման 5112 (Շենքերի և շինությունների կառուցում) հոդվածի «30000.0» թիվը փոխարինել «16300.0» թվով, 5113 (Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) հոդվածի «12000.0» թիվը փոխարինել «25700.0» թվով:

2․Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

**<u>Օրակարգ-6</u>**

**6) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի N 62-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

Զեկուցողը նշեց, որ Անի համայնքի ավագնու 2024 թվականի մայիսի 30-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականություն հանդիսացող և շահագործման ոչ պիտանի տրանսպորտային միջները աճուրդով օտարելու, օտարման մեկնարկային գինն ու պայմանները հաստատելու մասին>> N 62-Ա որոշմամբ նախատեսված էր աճուրդով օտարել համայնքի սեփականություն հանդիսացող, շահագործման համար ոչ պիտանի, թվով 8 /ութ/ միավոր տրանսպորատային միջոցները, որի մեկնարկային գների սահմանման համար հիմք էր ընդունվել <<Ա⍰ Գ⍰ ԷՍԹԵՅԹ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 8 /ութ/ միավոր տրանսպորտային միջոցների շուկայական արժեքների գնահատման 2024 թվականի մարտի 22-ի հաշվետվությունը:

Անիի համայնքապետարանի կողմից 2024 թվականի օգոստոսի 16-ին անցկացված Անի համայնքի սեփականություն հանդիսացող թվով 8 միավոր տրանսպորտային միջներից օրենքով սահմանված կարգով օտարվել են 1993 թվականի արտադրության OPEL OMEGA 2.6 մակնիշի 851 CR 61 պետհամարանիշի փոխադրամիջոցը և 2003 թվականի արտադրության VAZ 21213 մակնիշի 860 LL 70 պետհամարանիշի փոխադրամիջոցը: Մնացած տրանսպորտային միջոցների աճուրդին մասնակցելու համար հայտեր չեն ստացվել:

Կարևորելով օգտագործման ոչ պիտանի համայնքի սեփականություն հանդիսացող տրանսպորտային միջոցների օտարման, համայնքի բյուջեի ֆոնդային մասի ֆինանսական միջոցների համալրման անհրաժեշտությունը և օտարման մեկնարկային գինը նվազեցնելու վերաբերյալ համայնքապետարան ստացված առաջարկությունները, որոշման նախագծով նախատեսվում է T-170 մակնիշի 2976 LS պետհամարանիշի 1988 թվականի արտադրության տրակտորի և ZIL MMZ մակնիշի 861 LL 70 պետհամարանիշի 1985 թվականի արտադրության տրանսպորտային միջոցի օտարման մեկնարկային գինը նվազեցնել, որը համապատասխանում է <<Ա⍰ Գ⍰ ԷՍԹԵՅԹ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տրանսպորտային միջոցների շուկայական արժեքների գնահատման հաշվետվությունը:

Որոշման նախագծով նախատեսվում է ZIL MMZ մակնիշի 861 LL 70 պետհամարանիշի 1985 թվականի արտադրության տրանսպորտային միջոցի օտարման մեկնարկային գինը սահմանել <<640 000>> ՀՀ դրամ, նախորդ՝ <<800000>> ՀՀ դրամի փոխարեն: Իսկ T-170 մակնիշի 2976 LS պետհամարանիշի 1988 թվականի արտադրության տրակտորի մեկնարկային գինը սահմանել <<800 000>> ՀՀ դրամ, նախորդ՝ <<1 000 000>> ՀՀ դրամի փոխարեն:

Որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, <<Հրապարակային սակարկությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի դրույթներով և հիմք է ընդունվել <<Ա⍰ Գ⍰ ԷՍԹԵՅԹ>>

սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Անի համայնքի սեփականությունը հանդիսացող 8 /ութ/ միավոր տրանսպորտային միջոցների շուկայական արժեքների գնահատման 2024 թվականի մարտի 22-ի հաշվետվությունը:

Եթե որոշման նախագծի վերաբերյալ կան առաջարկություններ և դիտողություններ խնդրում եմ ներկայացնել:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու որոշումը:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի N 62-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, <<Հրապարակային սակարկությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի դրույթներով, հիմք ընդունելով <<Ա⍰ Գ⍰ ԷՍԹԵՅԹ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող 8 /ութ/ միավոր տրանսպորտային միջոցների շուկայական արժեքների գնահատման 2024 թվականի մարտի 22-ի հաշվետվությունը, հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի կողմից 2024 թվականի օգոստոսի 16-ին անցկացված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականություն հանդիսացող տրանսպորտային միջներից T-170 մակնիշի 2976 LS պետհամարանիշի 1988 թվականի արտադրության տրակտորի և ZIL MMZ մակնիշի 861 LL 70 պետհամարանիշի 1985 թվականի արտադրության տրանսպորտային միջոցի աճուրդին մասնակցելու համար հայտեր չեն ներկայացվել.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին**
**որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագնու 2024 թվականի մայիսի 30-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականություն հանդիսացող և շահագործման ոչ պիտանի տրանսպորտային միջները աճուրդով օտարելու, օտարման մեկնարկային գինն ու պայմանները հաստատելու մասին>> N 62-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման հավելվածի աղյուսակի 4-րդ կետի 8-րդ սյունակի վանդակում նշված <<800000>> թիվը փոխարինել <<640 000>> թվով:

2) որոշման հավելվածի աղյուսակի 8-րդ կետի 8-րդ սյունակի վանդակում նշված <<1000000>> թիվը փոխարինել <<800 000>> թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

<u>Օրակարգ-7</u>

**7) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ԵՎ ՁՈՐԱԿԱՊ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԱԲԱՐ 08-003-0020-0200 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,04 ՀԵԿՏԱՐ ԵՎ 08-073-0010-0043 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0□13665 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Օրակարգի 8-18-րդ հարցերը ներկայացվեցին Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյանի կողմից:

Զեկուցողը նշեց, որ Անիի համայնքապետարան ստացվել են դիմումներ՝ բնակելի տուն և բնակելի օժանդակ շինություններ կառուցելու նպատակով հողամասեր օտարելու խնդրանքով:

Համայնքապետարանը խրախուսում և ըստ ամենայնի աջակցում է համայնքի բնակավայրերում բնակելի տների և օժանդակ շինությունների կառուցման նախաձեռնությունները:

Որոշման նախագծով նախատեսվում է բնակելի տուն և օժանդակ շինություններ կառուցելու նպատակով աճուրդով, հրապարակային սակարկությունների միջոցով, օտարել Անի համայնքի Մարալիկ քաղաքի և Ձորակապ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության, համապատասխանաբար՝ 08-003-0020-0200 կադաստրային ծածկագրով 0,04 և 08-073-0010-0043 կադաստրային ծածկագրով 0,13665 հեկտար հողամասերը:

Որոշման նախագծով աճուրդով օտարվող հողամասերի համար առաջարկվում է սահմանել հետևյալ մեկնարկային գներն ու աճուրդի պայմանները՝

| N | Հողամասի գտնվելու վայրը, հասցեն | Հողամասի մակերեսը (հեկտար) | Հողամասի նպատակային նշանակությունը | Հողամասի գործառնական նշանակությունը | Օտարման նպատակը | Օտարման եղանակը | Տվյալ հողամասի մեկ հեկտարի կադաստրային արժեքը (ՀՀ դրամ) | Հողամասի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը՝ կադաստրային արժեքի նկատմամբ (%) | Տվյալ հողամասի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը (ՀՀ դրամ) | Աճուրդի մասնակցի գնային առաջարկի նվազագույն չափը մեկնարկային գնի նկատմամբ (% |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1□ | մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Հր. Շահինյան փողոց, 50 հողամաս | 0,04 | Բնակավայրերի | Բնակելի կառուցապատման | Բնակելի տան և օժանդակ շինությունների կառուցում | Աճուրդ | 7 920 000 | 120□0 | 380 160 | 5.0 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2. | մարզ Շիրակ, Անի համայնք, գյուղ Ձորակապ, 13-րդ փողոց, 1/1 հողամաս | 0▯13665 | Բնակավայրերի | Բնակելի կառուցապատման | Բնակելի տան և օժանդակ շինությունների կառուցում | Աճուրդ | 3 370 000 | 120▯0 | 552 613 | 5.0 |

Որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի, 67-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերի, 68-րդ հոդվածի 5-րդ մասի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու որոշումը:

**<u>Օրակարգ-8</u>**

**8) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԻՊԵՄԶԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀՈՂԵՐ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-013-0101-0004 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.976224 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի N 63-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

Զեկուցողը նշեց, որ Անիի համայնքապետարան է դիմել քաղաքացի՝ հանքակոպճի և քարի վերամշակման արտադրություն կազմակերպելու համար Անի համայնքի Անիպեմզա բնակավայրի վարչական սահմաններում համապատասխան հողամաս օտարելու խնդրանքով:

Օրենքով սահմանված կարգով փոխվել է նախընտրելի համարված հողամասի գործառնական նշանակությունը և այն ընդգրկվել է արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողերի կազմում: Այդ իսկ պատճառով անհրաժեշտություն է առաջացել նշված հարցի վերաբերյալ համայնքի ավագանու 2024 թվականի մայիսի 30-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Անիպեմզա բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասերի գործառնական նշանակության 08-013-0101-0004 կադաստրային ծածկագրով 0.976224 հեկտար հողամասն աճուրդով օտարելու, օտարման մեկնարկային գինն ու

պայմանները հաստատելու մասին >> N 63-Ա որոշումը ճանաչել ուժը կորցրաց և հարցի վերաբերյալ ընդունել նոր որոշում:

Որոշման նախագծով նախատեսվում է Անի համայնքի Անիպեմզա բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականությունը հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության 08-013-0101-0004 կադաստրային ծածկագրով 0.976224 հեկտար հողամասն (հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, գյուղ Անիպեմզա, 1-ին փողոց, 2-րդ նրբանցք, 12/2 հողամաս, Վկայական N 16092024-08-0044) օտարել աճուրդով՝ այդ հողամասում հանքակոպճի և քարի վերամշակման արտադրություն կազմակերպելու համար:

Որոշման նախագծով աճուրդով օտարվող հողամասերի համար նախատեսվում է սահմանվել հետևյալ մեկնարկային գինն ու աճուրդի պայմանները՝

| N | Հողամասի գտնվելու վայրը, հասցեն | Հողամասի ծածկագիրը, Վկայական N | Հողամասի մակերեսը (հեկտար) | Հողամասի նպատակային նշանակությունը | Հողամասի գործառնական նշանակությունը | Օտարման եղանակը | Տվյալ հողամասի մեկ հեկտարի կադաստրային արժեքը (ՀՀ դրամ) | Հողամասի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը՝ կադաստրային արժեքի նկատմամբ (%) | Տվյալ հողամասի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | **մարզ Շիրակ, Անի համայնք, գյուղ Անիպեմզա, 1-ին փողոց, 2-րդ նրբանցք, 12/2 հողամաս** | 08-013-0101-0004 N 17052024-08-0044 | **0.976224** | **Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների** | **ընդերքի օգտագործման համար տրամադրված** | **Աճուրդ** | **1 420 000** | **200.0** | **2 772 480** |

Որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի, 67-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերի, 68-րդ հոդվածի 5-րդ մասի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու որոշումը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԻՊԵՄԶԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀՈՂԵՐ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-013-0101-0004 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.976224 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի N 63-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի, 67-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերի, 68-րդ հոդվածի 5-րդ մասի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալի 2024 թվականի սեպտեմբերի 24-ի N 02.1//08679-2024 գրությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի մայիսի 30-ի N 63-Ա որոշման վերաբերյալ ներկայացված առարկությունը.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին**
**որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Անիպեմզա բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականությունը հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության 08-013-0101-0004 կադաստրային ծածկագրով 0.976224 հեկտար հողամասն (հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, գյուղ Անիպեմզա, 1-ին փողոց, 2-րդ նրբանցք, 12/2 հողամաս, Վկայական N 16092024-08-0044) օտարել աճուրդով՝ այդ հողամասում հանքակոճի և քարի վերամշակման արտադրություն կազմակերպելու համար:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետով նախատեսված աճուրդով օտարվող հողամասի մեկնարկային գինն ու աճուրդի պայմանները՝ համաձայն հավելվածի:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի մայիսի 30-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Անիպեմզա բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասերի գործառնական նշանակության 08-013-0101-0004 կադաստրային ծածկագրով 0.976224 հեկտար հողամասն աճուրդով օտարելու, օտարման մեկնարկային գինն ու պայմանները հաստատելու մասին >> N 63-Ա որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Որոշման հավելվածը կցվում է արձանագրությանը:

<u>Օրակարգ-9</u>

**9) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԻՆԳ ԿՏՈՐ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

Զեկուցողը նշեց, որ Անի համայնքի վարչական սահմաններում գտնվող և որոշման հավելվածում ներառված թվով հինգ կտոր հողամասերը, Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-Ծրագիր 3-ի շրջանակներում Մ 1 Երևան-Գյումրի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհի Լանջիկ-Գյումրի հատվածի վերակառուցումն ապահովելու նպատակով հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի շրջանակներում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հունվարի 11-ի N 56-Ն որոշմամբ ընդգրկվել են գերակա հանրային շահ ճանաչված հողերի ցանկում:

Կադաստրային քարտեզագրման անճշտության հետևանքով այդ հողամասերը կադաստրային էլեկտրոնային քարտեզում ամրագրվել են քաղաքացիների հողամաս, որոնց նկատմամբ գոյություն չունեն իրավունքի ձեռքբերումը հաստատող փաստաթղթեր:

Էլեկտրոնային կադաստրային քարտեզում թույլ տրված անճշտությունը ուղղելու նպատակով, որոշման նախագծով նախատեսվում է Անի համայնքի վարչական սահմաններում գտնվող, որոշման հավելվածում նշված հողամասերը, որոնք Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-Ծրագիր 3-ի շրջանակներում Մ 1 Երևան-Գյումրի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհի Լանջիկ-Գյումրի հատվածի վերակառուցումն ապահովելու նպատակով հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի շրջանակներում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հունվարի 11-ի N 56-Ն որոշմամբ ընդգրկվել են գերակա հանրային շահ ճանաչված հողերի ցանկում, ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը:

Այդ հողամասերն են՝

| No | Համայնք | Բնակավայր | Նախկին կադաստրային ծածկագիր | Նոր կադաստրային ծածկագիր | Հողամասի մակերեսը /հա/ | Իրավունքի սուբյեկտ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Անի | Ձորակապ | 08-073-0102-0040 | | 0,01102 | Անի համայնք |
| 2 | Անի | Ձորակապ | 08-073-0124-0005 | | 0,17388 | Անի համայնք |
| 3 | Անի | Ձորակապ | 08-073-0109-0010 | | 0,00271 | Անի համայնք |
| 4 | Անի | Ձորակապ | 08-073-01099-0002 | | 0,02337 | Անի համայնք |
| 5 | Անի | Մարալիկ | 08-003-0020-0173 | | 0,00138 | Անի համայնք |

Որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի N 698-Ն որոշմամբ սահմանված <<Օրթոֆոտոհատակագծի (օրթոլուսանկարի) հիման վրա կադաստրային քարտեզում հայտնաբերված սխալների ուղղման կարգի>> 39-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու որոշումը:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԻՆԳ ԿՏՈՐ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի N 698-Ն որոշմամբ սահմանված <<Օրթոֆոտոհատակագծի (օրթոլուսանկարի) հիման վրա կադաստրային քարտեզում հայտնաբերված սխալների ուղղման կարգի>> 39-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով, հաշվի առնելով, որ քաղաքացիների անվամբ հաշվառված սույն որոշման հավելվածում նշված հողամասերի նկատմամբ գոյություն չունեն իրավունքի ծագումը հաստատող փաստաթղթեր, էլեկտրոնային կադաստրային քարտեզում թույլ տրված անճշտությունը ուղղելու նպատակով.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին**
**որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ սույն որոշման հավելվածում նշված հողամասերը, որոնք Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-Ծրագիր 3-ի շրջանակներում Մ 1 Երևան-Գյումրի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհի Լանջիկ-Գյումրի հատվածի վերակառուցումն ապահովելու նպատակով հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի շրջանակներում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հունվարի 11-ի N 56-Ն որոշմամբ ընդգրկվել են գերակա հանրային շահ ճանաչված հողերի ցանկում, ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյանին.

Սահմանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե հողամասերի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետական գրանցման ենթարկելու համար:

3. Համապատասխան որակավորում ունեցող մասնագետի կողմից կազմված հողամասերի հատակագիծը կցվում են որոշմանը:

Որոշման հավելվածը կցվում է արձանագրությանը:

<u>Օրակարգ-11</u>

**11) ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ-ԾՐԱԳԻՐ 3-Ի ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ Մ 1 ԵՐԵՎԱՆ-ԳՅՈՒՄՐԻ-ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԼԱՆՋԻԿ-ԳՅՈՒՄՐԻ ՀԱՏՎԱԾԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳԵՐԱԿԱ ՇԱՀԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ**

**ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

Զեկուցողը նշեց, որ համայնքի ավագանու որոշման նախագծով նախատեսվում է Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-Ծրագիր 3-ի շրջանակներում Մ 1 Երևան-Գյումրի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհի Լանջիկ-Գյումրի հատվածի վերակառուցումն ապահովելու նպատակով հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի շրջանակներում գերակա հանրային շահերի ապահովման նպատակով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող սույն որոշման հավելվածում նախատեսված թվով 52 կտոր հողամասերը, օրենքով սահմանված կարգով հաշվարկված 19 991 338 ՀՀ դրամ փոխհատուցման գնով, օտարել Հայաստանի Հանրապետությանը:

Որոշման ընդունումը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, <<Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով և հիմք է ընդունվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հունվարի 11-ի N 56-Ն որոշումը։

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու որոշումը:

**ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ-ԾՐԱԳԻՐ 3-Ի ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ Մ 1 ԵՐԵՎԱՆ-ԳՅՈՒՄՐԻ-ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԼԱՆՋԻԿ-ԳՅՈՒՄՐԻ ՀԱՏՎԱԾԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳԵՐԱԿԱ ՇԱՀԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մաս 11-րդ կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենք 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, <<Հանրության գերակա շահերի ապահովման նպատակո սեփականության օտարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով, հիմ ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հունվարի 11-ի N 56-Ն որոշումը.

***Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝***

1. Տալ համաձայնություն, Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր Ծրագիր 3-ի շրջանակներում Մ 1 Երևան-Գյումրի-Վրաստանի սահման միջպետական նշանակությա ավտոմոբիլային ճանապարհի Լանջիկ-Գյումրի հատվածի վերակառուցումն ապահովելու նպատակո

հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի շրջանակներում գերակա հանրային շահեր ապահովման նպատակով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք սեփականությունը հանդիսացող սույն որոշման հավելվածում նախատեսված հողամասերը, օրենքո սահմանված կարգով հաշվարկված փոխհատուցման գնով, օտարել Հայաստան Հանրապետությանը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից

Որոշման հավելվածը կցվում է արձանագրությանը:

Օրակարգ-12

**12) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-003-0126-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԿԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏ ՀՈՂԱՏԵՍՔԻ 0.62898 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹՈՎ, ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՄՐՑՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

Զեկուցողը նշեց, որ Անիի համայնքապետարան է դիմել քաղաքացի՝ Մարալիկ քաղաքի վարչական սահմաններում գտնվող, հմայնքի սեփականություն հանդիսացող 08-003-0126-0001 կադաստրային ծածկագրով հողատարածքում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակության IV կարգի արոտ հողատեսքի 0.62898 հեկտար մակերեսով հողամասը վարձակալության իրավունքով, 25 տարի ժամկետով իրեն վարձակալության տրամադրելու խնդրանքով:

Որոշման նախագծով նախատեսվում է ընդառաջել քաղաքացու դիմումին և Անի համայնքի Մարալիկ քաղաքի վարչական սահմաններում գտնվող, հմայնքի սեփականություն հանդիսացող 08-003-0126-0001 կադաստրային ծածկագրով հողատարածքում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակության IV կարգի արոտ հողատեսքի 0.62898 հեկտար մակերեսով հողամասը գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով 25 /քսանհինգ/ տարի ժամկետով, բաց մրցույթով, հրապարակային սակարկությունների միջոցով վարձակալության տրամադրելու համար:

Որոշման ընդունումը կարգավորվում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի, 48-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ մասերի, 56-րդ հոդվածի 5-րդ մասի, 76-րդ հոդվածի 1-ին, 3-րդ մասերի, 78-րդ հոդվածի 3-րդ մասի, 81-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու որոշումը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-003-0126-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԿԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏ ՀՈՂԱՏԵՍՔԻ 0.62898 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹՈՎ, ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՄՐՑՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի, 48-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ մասերի, 56-րդ հոդվածի 5-րդ մասի, 76-րդ հոդվածի 1-ին, 3-րդ մասերի, 78-րդ հոդվածի 3-րդ մասի, 81-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին**

**որոշում է՝**

1. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ տալ համաձայնություն՝ Հայաստանի հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի վարչական սահմաններում գտնվող, հմայնքի սեփականություն հանդիսացող 08-003-0126-0001 կադաստրային ծածկագրով հողատարածքում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակության IV կարգի արոտ հողատեսքի 0.62898 հեկտար մակերեսով հողամասը գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով 25 /քսանհինգ/ տարի ժամկետով, բաց մրցույթով, հրապարակային սակարկությունների միջոցով վարձակալության տրամադրելու համար:

2. Հաստատել հողամասի վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրման մրցույթի պայմաններն ու վարձավճարի մեկնարկային չափը՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Որոշման հավելվածը կցվում է արձանագրությանը:

<u>Օրակարգ-13</u>

**13) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-003-0126-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԿԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏ ՀՈՂԱՏԵՍՔԻ 0.29973 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

Զեկուցողը նշեց, որ Անիի համայնքապետարան է դիմել քաղաքացի՝ Անի համայնքի Մարալիկ քաղաքի վարչական սահմաններում գտնվող, հմայնքի սեփականություն հանդիսացող 08-003-0126-0001 կադաստրային ծածկագրով հողատարածքում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտ հողատեսքի 0.29973 հեկտար մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա՝

գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակություն փոխադրելու և այդ հողամասում գյուղատնտեսական արտադրական նշանակության խելացի խոզաբուծարան կառուցելու նպատակով հողամասը օրենքով սահմանված կարգով օտարելու խնդրանքով:

Որոշման նախագծով նախատեսվում է՝ հաշվի առնելով քաղաքացու դիմումը, Անի համայնքի Մարալիկ քաղաքի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող 08-003-0126-0001 կադաստրային ծածկագրով հողատարածքում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտ հողատեսքի 0.29973 հեկտար մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակություն, այդ հողամասում գյուղատնտեսական արտադրական նշանակության խելացի խոզաբուծարան կառուցելու նպատակով հողամասը օրենքով սահմանված կարգով օտարելու համար:

Որոշման ընդունումը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 10-րդ, 12-րդ, 15-րդ և 16-րդ մասերի 3-րդ կետերի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ, 31-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունվել ՀՀ կառավարության 2021 թվականի հունիսի 17-ի N 987-Ն որոշմամբ սահմանված <<Գյուղատնտեսական նշանակության հողերը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի փոխադրման դեպքերի>> 1-ին կետի 14-րդ ենթակետը և հաշվի է առնվել այնհանգամանքը, որ համայնքի սեփականություն հանդիսացող 08-003-0126-0001 կադաստրային ծածկագրով հողատարածքում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտ հողատեսքի 0.29973 հեկտար հողամասը շրջապատված լինելով վարելահողերով և խոր ձորակով գյուղատնտեսական կենդանիների արածեցման համար չի օգտագործվում:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու որոշումը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-003-0126-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԿԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏ ՀՈՂԱՏԵՍՔԻ 0.29973 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 10-րդ, 12-րդ, 15-րդ և 16-րդ մասերի 3-րդ կետերի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ, 31-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2021 թվականի հունիսի 17-ի N 987-Ն որոշմամբ սահմանված <<Գյուղատնտեսական նշանակության հողերը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի փոխադրման դեպքերի>> 1-ին կետի 14-րդ ենթակետը և հաշվի առնելով, որ Հայաստանի հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող 08-003-0126-0001 կադաստրային ծածկագրով հողատարածքում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտ հողատեսքի 0.29973 հեկտար հողամասը շրջապատված լինելով վարելահողերով և խոր ձորակով գյուղատնտեսական կենդանիների արածեցման

համար չի օգտագործվում, ընդառաջելով Անիի համայնքապետարան ստացված քաղաքացու դիմումին՝ գյուղատնտեսական արտադրական նշանակության խելացի խոզաբուծարան կառուցելու համար հողամաս հատկացնելու վերաբերյալ.

***Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է***

1. Հայաստանի հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի վարչական սահմաններում գտնվող, հմայնքի սեփականություն հանդիսացող 08-003-0126-0001 կադաստրային ծածկագրով հողատարածքում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտ հողատեսքի 0.29973 հեկտար մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակություն, այդ հողամասում քաղաքացու կողմից գյուղատնտեսական արտադրական նշանակության խելացի խոզաբուծարան կառուցելու նպատակով հողամասը օրենքով սահմանված կարգով օտարելու համար:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Ա. Սարիբեկյանին.

1) Հողամասի նպատակային նշանկության սույն որոշման 1-ին կետով կատարված փոփոխությունը արտացոլել հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և համայքի 2025 թվականի հողային հաշվեկշիռներում:

3. Սույն որոշմամբ նախատեսված հողամասի նպատակային նշանակության փոփոխությամբ պայմանավորված անշարժ գույքի նկատմամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

<u>Օրակարգ-14</u>

**14) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ Հ□ ՇԻՐԱԶԻ ՓՈՂՈՑ 28 ՇԵՆՔ, ԹԻՎ 5 ԲՆԱԿԱՐԱՆԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՎՅԱԼ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲՆԱԿԻՉ ՌՈՒԶԱՆՆԱ ՎՈԼՈԴՅԱՅԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԵՐԿՈՒ ԱՆՁԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

Զեկուցողը նշեց, որ Անիի համայնքապետարան է դիմել քաղաքացի Ռուզաննա Վոլոդյայի Հարությունյանը, մարալիկ քաղաքի 2-րդ թաղամասի վթարային ճանաչվելու 5-րդ շենքի իր ընտանիքին պատկանող 28-րդ բնակարանի դիմաց, իր ընտանիքին հատկացված Մարալիկ քաղաքի Հր□ Շահինյան փողոցի 28-րդ շենքի թիվ 5 բնակարանը սեփականության իրավունքով իր ընտանիքին օտարելու համար:

Որոշման նախագծով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության կառավրության 2018 թվականի մարտի 6-ի N 303-Ն որոշման համաձայն Անի համայնքի սեփականությունը հանդիսացող Մարալիկ քաղաքի Հր□ Շահինյան փողոցի 28-րդ շենքի թիվ 5 բնակարանը /կադաստրային ծածկագիր՝ 08-003-0026-0060-007-025, Վկայական՝ N 02072024-08-0039/ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով նվիրել տվյալ բնակարանում հաշվառված

և փաստացի բնակվող քաղաքացի Ռուզաննա Վոլոդյայի Հարությունյանի երկու անձից բաղկացած ընտանիքին:

Որոշման ընդունումը կարգավորվում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, 102-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով, հիմք է ընդունվել Հայաստանի Հանրապետության կառավրության 2018 թվականի մարտի 6-ի N 303-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2014 թվականի մարտի 27-ի N 55-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 38-րդ կետը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2014 թվականի մարտի 27-ի N 55-Ա և 2013 թվականի դեկտեմբերի 9-ի N 145 կարգադրությամբ ստեղծված Մարալիկ քաղաքի N N 17, 22 28, 35 բնակելի շենքերի բնակարանների բաշխման հանձնաժողովի կողմից 02 04 2014 թ անցկացված վիճակահանության արդյունքների վերաբերյալ հաստատված N 4 արձանագրությունը•

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու որոշումը:

## Ո Ր Ո Շ Ու Մ N 121-Ա

<<26>> սեպտեմբերի 2024 թվական քաղաք Մարալիկ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ Հ. ՇԻՐԱԶԻ ՓՈՂՈՑ 28 ՇԵՆՔ, ԹԻՎ 5 ԲՆԱԿԱՐԱՆԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՎՅԱԼ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲՆԱԿԻՉ ՌՈՒԶԱՆՆԱ ՎՈԼՈԴՅԱՅԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԵՐԿՈՒ ԱՆՁԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, 102-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավրության 2018 թվականի մարտի 6-ի N 303-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2014 թվականի մարտի 27-ի N 55-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 38-րդ կետը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2014 թվականի մարտի 27-ի N 55-Ա և 2013 թվականի դեկտեմբերի 9-ի N 145 կարգադրությամբ ստեղծված Մարալիկ քաղաքի N N 17, 22. 28, 35 բնակելի շենքերի բնակարանների բաշխման հանձնաժողովի կողմից 02.04.2014 թ. անցկացված վիճակահանության արդյունքների վերաբերյալ հաստատված N 4 արձանագրությունը.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող Մարալիկ քաղաքի Հր. Շահինյան փողոցի 28-րդ շենքի թիվ 5 բնակարանը /կադաստրային ծածկագիր՝ 08-003-0026-0060-007-025, Վկայական՝ N 02072024-08-0039/ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով նվիրել տվյալ բնակարանում հաշվառված և փաստացի բնակվող քաղաքացի Ռուզաննա Վոլոդյայի Հարությունյանի երկու անձից

բաղկացած ընտանիքին /հետագայում՝ Նվիրառու/:

2. Սույն որոշման 1-ին կետով նվիրաբերված բնակարանի նկատմամբ ճանաչել քաղաքացի Ռուզաննա Վոլոդյայի Հարությունյանի /անձնագիր՝ AV0273452, տրված՝ 21.06.2022թ. 022-ի կողմից, հաշվառման հասցե՝ մարզ Շիրակի, Անի համայնք, քաղաք Մարալիկ Շիրազի փողոց 28 շ. բն 5-6/ և որդու՝ Աշոտ Մանվելի Թորոսյանի /անձնագիր՝ AL0331043, տրված՝ 11.07.2023թ. 022-ի կողմից, հաշվառման հասցե՝ մարզ Շիրակի, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Շիրազի փողոց շենք 28, բն 5-6/ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Արման Սարիբեկյանին.

ա) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Նվիրառուի հետ կնքել անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր.

բ) Սույն որոշումից բխող իրավունքները օրենքով սահմանված կարգով ենթակա են պետական գրանցման՝ Նվիրառուի միջոցներով:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում սույն որոշման մասին Քաղաքացուն պատշաճ ծանուցման պահից:

Օրակարգ-15

**15) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 08-003-0026- ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԿԱ 006330 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

Զեկուցողը նշեց, որ որոշման ընդունման անհրաժեշտությունը առաջացել է այն հանքամանքով, որ Անի համայնքի Մարալիկ քաղաքի վարչական սահմաններում գտնվող 08-003-0026- կադաստրային ծածկագրով հողատարածքում առկա 006330 հեկտար հողամասը, որի վրա առկա են ինքնակամ շինություններ, Մարալիկ քաղաքի էլետրոնայի կադաստրային հերթապահ քարտեզում թույլ տրված անճշտության հետևանքով սեփականության իրավունքի սուբյեկ է գրանցվել քաղաքացի /հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 03/09/2024թ N Կ-03092024-08-0189 որոշում/, որի նկատմամբ գոյություն չունեն իրավունքի ծեռքբերումը հաստատող փաստաթղթեր:

Որոշմամբ նախատեսվում է Մարալիկ քաղաքի էլեկտրոնային կադաստրային քարտեզում թույլ տրված անճշտությունը ուղղելու նպատակով, Անի համայնքի Մարալիկ քաղաքի վարչական սահմաններում գտնվող, 08-003-0026- կադաստրային ծածկագրով հողատարածքում առկա 006330 հեկտար մակերեսով հողամասը, որի վրա առկա են ինքնակամ շինություններ, ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը:

Որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի N 698-Ն որոշմամբ սահմանված <<Օրթոֆոտոհատակագծի (օրթոլուսանկարի) հիման վրա կադաստրային քարտեզում հայտնաբերված սխալների ուղղման կարգի>> 39-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով2 և հաշվի է առնելով այն հանգամանքը, որ Անի համայնքի Մարալիկ քաղաքի վարչական սահմաններում գտնվող 08-003-0026- կադաստրային ծածկագրով հողատարածքում առկա 0□06330 հեկտար հողամասը Մարալիկ քաղաքի էլետրոնայի կադաստրային հերթապահ քարտեզում թույլ տրված անճշտության հետևանքով սեփականության իրավունքի սուբյեկ է գրանցվել քաղաքացի:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու որոշումը:

**<u>Օրակարգ-16</u>**

**16) «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-003-0050-0031 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,0187 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ՄԱՆՎԵԼ ԶԱՎԵՆԻ ԱՎԴԱԼՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

Զեկուցողը նշեց, որ Անիի համայնքապետարան է դիմել քաղաքացի Մանվել Զավենի Ավդալյանը, սեփականության իրավունքով իրեն պատկանող մարզ Շիրակի, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Շիրակցի փողոց, 1-ին նրբանցք թիվ 15 հասցեում գտնվող բնակելի տան պահպանման ու սպասարկման համար նախատեսված 08-003-0050-0024 կադաստրային ծածկագրով 0,0799 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին հարակից 08-003-0050-0031 կադաստրային ծածկագրով 0□0187 հեկտար բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, որպես ընդլայնում իրեն վաճառելու խնդրանքով:

Հաշվի առնելով, որ ընդլայնման նպատակով նախատեսված հողամասը, որպես առանձին գույքային միավոր հնարավոր չէ օտարել աճուրդային կարգով և այն բավարարում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-3-րդ, 6-րդ և 7-րդ ենթակետերով սահմանված չափորոշիչներին, որոշման նախագծով նախատեսվում է այդ հողամասը ուղղակի կարգով տվյալ հողամասի կադաստրային գնի չափով՝ 1 (մեկ) քառակուսի մետրը՝ 792 (յոթ հարյուր իննսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ, 0□0187 հեկտար հողամասի համար 148 110 /մեկ հարյուր քառասունութ հազար հարյուր տաս/ Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով վաճառել քաղաքացի Մանվել Զավենի Ավդալյանի:

Նշվեց, որ՝

1) օտարվող հողամասը չի գտնվում հաստատված պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերով նախատեսված գոտիներում,

2) հողամասի օտարումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,

3) օտարվող հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի կազմում:

Որոշման ընդունումը կարգավորվում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապեթության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մայիսի 12-ի N 286 որոշմամբ հաստատված «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի» 6-րդ կետի դրույթներով և հիմք է ընդունվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 1-3-րդ, 6-րդ, 7-րդ ենթակետերը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու որոշումը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-003-0050-0031 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,0187 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ՄԱՆՎԵԼ ԶԱՎԵՆԻ ԱՎԴԱԼՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապեթության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մայիսի 12-ի N 286 որոշմամբ հաստատված «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի» 6-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 1-3-րդ, 6-րդ, 7-րդ ենթակետերը և նկատի ունենալով, որ քաղաքացի Մանվել Զավենի Ավդալյանին սեփականության իրավունքով պատկանող մարզ Շիրակի, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Շիրակացի փողոց, 1-ին նրբանցք թիվ 15 հասցեում գտնվող բնակելի տան պահպանման ու սպասարկման համար նախատեսված 08-003-0050-0024 կադաստրային ծածկագրով 0,0799 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին /վկայական՝ թիվ 2834824, տրված՝ 27.12.2011թ/ հարակից 08-003-0050-0031 կադաստրային ծածկագրով 0. 0187 հեկտար բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /Վկայական՝ N 22072024-08-0059, հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Ա. Շիրակացի փողոց 6 հողամաս/ հնարավոր չէ որպես առանձին գույքային միավոր օտարել հրապարակային սակարկությունների միջոցով, հաշվի առնելով քաղաքացու 2024 թվականի հուլիսի 23-ի դիմումը:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին
որոշում է՝

1. Հաշվի առնելով, որ քաղաքացի Մանվել Ջավենի Ավդալյանին սեփականության իրավունքով պատկանող մարզ Շիրակի, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Շիրակացի փողոց, 1-ին նրբանցք թիվ 15 հասցեում գտնվող բնակելի տան պահպանման ու սպասարկման համար նախատեսված 08-003-0050-0024 կադաստրային ծածկագրով 0,0799 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին /վկայական՝ թիվ 2834824, տրված՝ 27.12.2011թ/ հարակից՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող 08-003-0050-0031 կադաստրային ծածկագրով 0.0187 հեկտար բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /Վկայանան՝ N 22072024-08-0059, հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Ա. Շիրակացի փողոց 6 հողամաս/, որպես առանձին գույքային միավոր հնարավոր չէ օտարել աճուրդային կարգով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-3-րդ, 6-րդ և 7-րդ ենթակետերով սահմանված չափորոշիչների հիմքով, այդ հողամասը ուղղակի կարգով տվյալ հողամասի կադաստրային գնի չափով՝ 1 (մեկ) քառակուսի մետրը՝ 792 (յոթ հարյուր իննսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ, 0.0187 հեկտար հողամասի համար **148 110 /մեկ հարյուր քառասունութ հազար հարյուր տաս/ Հայաստանի Հանրապետության դրամ** արժեքով վաճառել քաղաքացի Մանվել Ջավենի Ավդալյանին (անձնագիր՝ AS 0487308, տրված՝ 23.01.2019թ, 022-ի կողմից, բնակության հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Շիրակացի փողոց, 1-ին նրբանցք թիվ 15 բնակելի տուն, հետագայում՝ Քաղաքացի):

2. Նշել, որ

1) օտարվող հողամասը չի գտնվում հաստատված պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերով նախատեսված գոտիներում,

2) հողամասի օտարումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,

3) օտարվող հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի կազմում:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Արման Սարիբեկյանին.

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմաված կարգով Քաղաքացու հետ կնքել սույն որոշման 1-ին կետով նախատեսված հողամասի առուվաճառքի պայմանագիր և ապահովել սույն որոշիմից բխող իրավունքների պետական գրանցումը՝ Քաղաքացու միջոցներով:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում սույն որոշման մասին Քաղաքացուն պատշաճ ծանուցման պահից:

<u>Օրակարգ-17</u>

**17) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ Մ? ՄԱԴԱԹՅԱՆ ՓՈՂՈՑ, 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ 5-ՐԴ ՇԵՆՔ, ԹԻՎ 3 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՔԱՂԱՔԱՑԻ ԳԵՎՈՐԳ ԳԵՂԱՄԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

Զեկուցողը նշեց, որ Անի համայնքի ղեկավարին է դիմել Վաստակավոր ուսուցիչ Գևորգ Գեղամի Գևորգյանը /հիմք՝ Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության 1965թ□ հոկտեմբերի 2-ի հրամանագիր/ Մարալիկ քաղաքի ազատ բնակարաններից սեփականության իրավունքով իրեն մեկ սենյականոց բնակարան հատկացնելու խնդրանքով: Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 19/10/2023թ□ N ԱՏ-19102023-99-0520 տեղեկանքի համաձայն Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի էլեկտրոնային արխիվի տվյալներով Գևորգ Գեղամի Գևորգյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում առկա չէ:

Որոշման նախագծով նախատեսվում է Անի համայնքի սեփականությունը հանդիսացող Մարալիկ քաղաքի Մ□ Մադաթյան փողոց, 1-ին փակուղի 5-րդ շենք թիվ 3 մեկ սենյականոց ազատ բնակարանը սեփականության իրավունքով նվիրել Վաստակավոր մանկավարժ՝ Գևորգ Գեղամի Գևորգյանին /անձնագիր՝ AV0519170, տրված՝ 15.11.2022 թ□ 022-ի կողմից/:

Որոշման ընդունումը կարգավորվում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, 102-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով և հիմք է ընդունվել Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի մարտի 14-ի N 51 որոշմամբ հաստատված N 7 հավելվածը, համաձայն որի պետական բնակելի ֆոնդը և պետական ոչ բնակելի տարածքները սեփականության իրավունքով փոխանցվել են համայնքներին:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու որոշումը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ Մ□ ՄԱԴԱԹՅԱՆ ՓՈՂՈՑ, 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ 5-ՐԴ ՇԵՆՔ, ԹԻՎ 3 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՔԱՂԱՔԱՑԻ ԳԵՎՈՐԳ ԳԵՂԱՄԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, 102-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի մարտի 14-ի N 51 որոշմամբ հաստատված N 7 հավելվածը, համաձայն որի պետական բնակելի ֆոնդը և պետական ոչ բնակելի տարածքները սեփականության իրավունքով փոխանցվել են համայնքներին, հաշվի առնելով, որ Անի համայնքի Մարալիկ քաղաքի Մ□ Մադաթյան փողոց, 1-ին փակուղի 5-րդ շենք, թիվ 3 մեկ սենյականոց բնակարանը բնակության կամ սեփականության իրավունքով որևէ անձի հատկացված չէ, ընդառաջելով Վաստակավոր ուսուցիչ /հիմք՝ Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության 1965թ□ հոկտեմբերի 2-ի հրամանագիր/ Գևորգ Գեղամի Գևորգյանի 2023 թվականի դեկտեմբերի 8-ի-ի դիմումին.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է**

1. Հաշվի առնելով, որ քաղաքացին Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի էլեկտրոնային արխիվի տվյալներով Գևորգ Գեղամի Գևորգյանի անվամբ որևէ անշարժ գույքի

նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում առկա չէ /հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 19/10/2023թ. N ԱՏ-19102023-99-0520 տեղեկանք/, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող Մարալիկ քաղաքի Մ� Մադաթյան փողոց, 1-ին փակուղի 5-րդ շենք 3 բնակարան հասցեի մեկ սենյականոց բնակարանը սեփականության իրավունքով նվիրել Վաստակավոր մանկավարժ՝ Գևորգ Գեղամի Գևորգյանին /անձնագիր՝ AV0519170, տրված՝ 15.11.2022 թ. 022-ի կողմից, հետագայում՝ Նվիրառու/:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Արման Սարիբեկյանին.

ա) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Նվիրառուի հետ կնքել անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր.

բ) Սույն որոշումից բխող իրավունքները օրենքով սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման՝ Նվիրառուի միջոցներով:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում սույն որոշման մասին Քաղաքացուն պատշաճ ծանուցման պահից:

Ներկայացվեց հրատապության կարգով օրակարգում ընդգրկված վերջին հարցը:

Օրակարգ-18

**18) ՔԱՂԱՔԱՑԻ ԳԵՅԻՄ ՖԵԼԻՔՍԻ ԱՌՈՒՇԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-003-0029-0108 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,00886 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԳԵՅԻՄ ՖԵԼԻՔՍԻ ԱՌՈՒՇԱՆՅԱՆԻ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

Զեկուցողը նշեց, որ� հարցի քննարկման հրատապության մասին պարոն ՈՒռուտյանը հանգամալից ներկայացրեց, որն առնչվում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի գեոդեզիայի և հողօգտագործման վերահսկողության վարչության մասնագետների կողմից Անիի համայնքապետարանում իրականացված ստուգումների վերաբերյալ կազմված 2023 թվականի նոյեմբերի 6-ի N ՏԾ/ԳՀ/13-18 ակտում արձանագրվել է հողի օգտագործման տրամադրման կարգի խախտումը վերանելու և տեսչական մարմնի ղեկավարի 2023 թվականի նոյեմբերի 14-ի N ՏԾ/ԳՀ/13-18 որոշումամբ տրված պատադիր կատարման ենթակա ցուցումը ապահովելու հետ:

Որոշման նախագծով նախատեսվում է Քաղաքացի Գեյիմ Ֆելիքսի Առուշանյանի կողմից կառուցապատման իրավունքով օգտագործվող համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման

գործառնական նշանակության 08-003-0029-0108 կադաստրային ծածկագրով 0,00886 հեկտար մակերեսով հողամասը /Կառուցապատման իրավունքի Վկայական՝ N 06102023-08-0039/ գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով, տվյալ հողամասի կադաստրային արժեքով, 70172 /յոթանասուն հազար մեկ հարյուր յոթանասուներկու/ Հայաստանի Հանրապետության դրամ գումարով, վաճառել քաղաքացի Գեյիմ Ֆելիքսի Առուշանյանին

Որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 4-րդ կետերի, 2-րդ մասի դրույթներով և հիմք է ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի գեոդեզիայի և հողօգտագործման վերահսկողության վարչության մասնագետների կողմից կազմված 2023 թվականի նոյեմբերի 6-ի N ՏԾ/ԳՀ/13-18 ակտը և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի 2023 թվականի նոյեմբերի 14-ի N ՏԾ/ԳՀ/13-18 որոշումը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու որոշումը:

**ՔԱՂԱՔԱՑԻ ԳԵՅԻՄ ՖԵԼԻՔՍԻ ԱՌՈՒՇԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-003-0029-0108 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,00886 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԳԵՅԻՄ ՖԵԼԻՔՍԻ ԱՌՈՒՇԱՆՅԱՆԻ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 4-րդ կետերի, 2-րդ մասի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի գեոդեզիայի և հողօգտագործման վերահսկողության վարչության մասնագետների կողմից կազմված 2023 թվականի նոյեմբերի 6-ի N ՏԾ/ԳՀ/13-18 ակտը և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի 2023 թվականի նոյեմբերի 14-ի N ՏԾ/ԳՀ/13-18 որոշումը և հաշվի առնելով քաղաքացի Գեյիմ Ֆելիքսի Առուշանյանի 2024 թվականի մայիսի 20-ի դիմումը՝ կառուցապատման իրավունքով իր կողմից օգտագործվող 08-003-0029-0108 կադաստրային ծածկագրով 0,00886 հեկտար հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով իրեն վաճառելու մասին

***Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝***

1. Քաղաքացի Գեյիմ Ֆելիքսի Առուշանյանի կողմից կառուցապատման իրավունքով օգտագործվող համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային

նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 08-003-0029-0108 կադաստրային ծածկագրով 0,00886 հեկտար մակերեսով հողամասը /Կառուցապատման իրավունքի Վկայական՝ N 06102023-08-0039, համայնքի սեփականության իրավունքի Վկայական՝ 20102022-08-0002/ գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով, տվյալ հողամասի կադաստրային արժեքով, 70172 /յոթանասուն հազար մեկ հարյուր յոթանասուներկու/ Հայաստանի Հանրապետության դրամ գումարով, վաճառել քաղաքացի Գեյիմ Ֆելիքսի Առուշանյանին (հետագայում Գնորդ, բնակության հասցեն՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Ձերժինսի փողոց, շենք 10, բնակարան 4, անձնագիր՝ AV0491489 տրված՝ «26» հոկտեմբերի 2022թվական, 022-ի կողմից):

2. Սույն որոշումից բխող իրավունքները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա են պետական գրանցման՝ Գնորդի միջոցներով:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացուն սույն որոշման մասին պատշաճ ծանուցման պահից:

<u>**ԱՐՄԱՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**</u>

Զեկուցողը հայտարարեց, որ Անի համայնքի ավագանու հերթական նիստի օրակարգի հարցերը սպառված են, նիստը հայտարարվեց փակված:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՐՄԱՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

**Արձանագրեց՝**
**ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար Հ. Համբարյանը**

<<26>> սեպտեմբերի 2024 թ.
քաղաք Մարալիկ